

Բնական թվերը, գրոն ու թվերի գրառումը

Առարկաների քանակը հաշվելիս թվերին սկսած մեկից, քայլ առ քայլ մեկ ենք գումարում՝ արդյունքում ստանալով

1, 2, 3, 4, ..., 99, 100, ... շարքի թվերից որևէ մեկը: Հաշվելիս առաջացող թվերը կոչվում են բնական թվեր, իսկ շարքը՝ բնական թվերի շարք:

Ամենափոքր բնական թիվը 1-ն է:

Թվերը գրի են առնվում հետևյալ տասը թվանշանների միջոցով՝

0, 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9:

Օրինակ՝ 569, 45987, 15, 598:

Թվանշանները որոշ թվերի սեղմ, միայն մեկ նշան պարունակող գրառումներ են:

Ցանկացած թիվ կարելի է գրի առնել տասը թվանշանների միջոցով այն բանի շնորհիվ, որ թվի գրառման մեջ թվանշանի իմաստը կախված է նրա գրառման դիրքից:

Թվերի գրառման այս եղանակները (համակարգերը), որոնցում թվանշանի իմաստը կախված է նրա գրառման դիրքից, կոչվում է **դիրքային**: Թվերի գրառման այս համակարգը կոչվում է նաև **տասական**, քանի որ նրանում գործածվում են տասը թվանշան:

Հայերը նախքան դիրքային համակարգին անցնելը թվերը գրառելու համար օգտագործում էին այբուբենի տառերը:

Ա-Թ տառերը նշանակու էին **1-9** թվերը:

Ժ-Ղ տառերը նշանակու էին **10-90** թվերը:

Ճ-Ջ տառերը նշանակու էին **100-900** թվերը:

Ռ-Ք տառերը նշանակու էին **1000-9000** թվերը:

Առաջադրանքներ

1. Քանի՞ տարբեր թվանշաններ են օգտագործվում 45688876 թվի գրառման մեջ:

5

2. Քանի՞ տասնյակ է պարունակվում այն հետևյալ թվերից յուրաքանչյուրում՝

87, 49, 38, 12, 99, 85:

8,4,3,1,9,8,

3. Քանի՞ հարյուրյակ է պարունակվում այն հետևյալ թվերից յուրաքանչյուրում՝

156, 569, 458, 359:

1,5,4,3

4. Թվանշաններից որո՞վ չի կարող սկսվել թվի գրառումը:

0

5. Թվանշաններով գրի առեք այն թիվը, որը պարունակում է 50 տասնյակ և 5 միավոր:

505

6. Թվանշաններով գրի առեք այն թիվը, որոնք պարունակում են՝

- Հինգ տասնյակ և յոթ միավոր,
57
- Ութ հարյուրյակ և 9 միավոր,
809
- Ինը հարյուրյակ, հինգ տասնյակ և յոթ միավոր,
957
- Մեկ հարյուրյակ և 8 տասնյակ,
180
- Երեք հազարյակ, վեց հարյուրյակ, երեք միավոր:
3603

Խնդիրներ սեպտեմբեր ամսվա Փլեշմորից (2017թ.)

1. Մեր այգում կա 120 ծառ, որոնցից 30 հատը նռենի է, իսկ 40 հատը թզենի, մնացածը խնձորենի: Քանի՞ խնձորենի կա այգում:

$$120-30-40=50$$

2. Ուսումնական ճամփորդության ժամանակ 24 հոգանոց սովորողների խմբի ուղիղ կեսը զբաղվեց տեղանքի մաքրությամբ: Մնացածի կեսը տեղանքի բուսականությունն ուսումնասիրեց: Մյուս սովորողները լուսանկարեցին ընկերներին: Քանի՞ սովորող զբաղվեց լուսանկարչությամբ:

$$24:2=12$$

$$12:2=6$$

3. Նավահանգստում կա 5 շոգենավ: Նրանք գտնվում են մեկը մյուսից 3 կմ հեռավորության վրա: Որքա՞ն է առաջին և հինգերորդ շոգենավերի միջև եղած հեռավորությունը:

$$4*3=12\text{կմ}$$